ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«12» հունիսի 2018 թվականի N 18

ՎԻԳԵՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Վիգեն Տեր-Գրիգորյանի դիմումը՝ կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի տեղակալ Վիգեն Տեր-Գրիգորյանի և Մուսալեռ համայնքի ղեկավարի միջև 2016 թվականի մայիսի 10-ին անորոշ ժամկետով կնքած թիվ 6 աշխատանքային պայմանագիրը 2018 թվականի հունիսի 14-ից համարել լուծված:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին (Դոնարա Խաչատրյան) սահմանված կարգով իրականացնել վերջնահաշվարկ:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, հունիսի 12
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«6» հունիսի 2018 թվականի N 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «ՀՀ Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2018թ. հիմնական միջոցառումների պլան»-ի 7.1.2 կետի պահանջների, իմ ղեկավարությամբ, Մուսալեռ համայնքում 14.06.2018թ. անցկացվելու է շտաբային ուսումնավարժություն «ՈՒժեղ երկրաշարժի առաջացման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով:

Նշված ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով կարգադրում եմ՝

1. 2018թ-ի հունիսի 14-ին Մուսալեռ համայնքում իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն «ՈՒժեղ երկրաշարժի առաջացման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով:
2. Նշանակել ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Սայադյանին:
3. Ուսումնավարժությանը ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանը.

2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքի տարահանման մարմինների վարչակազմերը.

4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) մինչև 2018 թվականի հունիսի 7-ը կազմել և համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաթեթը,

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը ուսումնավարժության անցկացմանը,

3) 2018 թվականի հունիսի 13-ին զեկուցել ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին:

5. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

6. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թվական, հունիսի 6

գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաուլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հունիսի 2018 թվականի N 26

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 72-Ն, 2018 թվականի հունվարի 30-ի N4 որոշումը՝ որոշում եմ.

1. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում ծնված երեխաների ծնողներին՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի բնակչի մահվան դեպքում ընտանիքի անդամին՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, հունիսի 27
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի
N26ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

Ծնված երեխաների ծնողներին

Հ/Հ	Երեխայի ազգանուն, անուն, հայրանունը	Երեխայի ծննդյան օրը	Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը	Գումարի չափը
1	Աբրոյան Էլեն Լեոնիդ	05.06.2018	Չիլինգարյան Մարիամ Աշոտի	30 000
2	Սահակյան Միքայել Միեր	12.06.2018	Սահակյան Միեր Սևակի	30 000
3	Թովմասյան Սամվել Մկրտիչ	10.05.2018	Թովմասյան Մկրտիչ Սամվելի	30 000

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի
N26 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

Հարազատին կորցրած ընտանիքին դրամական օգնություն տալու

Հ/Հ	Մահացածի ազգանուն, անուն, հայրանունը	Մահվան ամսաթիվ	Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը	Գումարի չափը
1	Վարդանյան Ժենյա Սարգսի	17.05.2018	Վարդանյան Զոհրաբ Հարությունի	50 000
2	Զաքարյան Սիրանուշ Մխիթարի	25.05.2018	Զաքարյան Հերիք Մակեդոնի	50 000
3	Նիկողոսյան Սիրանուշ Նշանի	07.06.2018	Թադևոսյան Արթուր Ավետիքի	50 000
4	Ավետիսյան Նազիկ Սարգսի	23.06.2018	Ավետիսյան Էդիկ Պետրոսի	50 000

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հունիսի 2018 թվականի N 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևավորման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացքը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N272-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 19.06.2018թ. թիվ 01.1/02.1/2186-18 գրությունը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Սայադյանին:
2. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձին՝ հաշվառումը

իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N272- Ն որոշմամբ հաստատված կարգով:

3. Սույն որոշմամբ նշված տեղեկությունները հրապարակել համայնքապետարանի պաշտոնական կայքէջում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, հունիսի 27
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հունիսի 2018 թվականի N 24

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 72-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքի օտարումը աճուրդային կարգով կատարելու նպատակով լրատվամիջոցներում հայտարարություն տեղադրելու համար տրամադրել 10 000 (տասը հազար) դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, հունիսի 27
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հունիսի 2018 թվականի N 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.0706 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ /ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔ/ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի հունիսի 12-ի N 50 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 04-069-0572-0002 ծածկագրով 0.0706 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը օտարել աճուրդային կարգով:
   1) Աճուրդով վաճառքի մեկնարկային գին սահմանել 575 դրամ 1 քմ համար, ընդամենը՝ 405 950 (չորս հարյուր հինգ հազար ինը հարյուր հիսուն) դրամ, որը կազմում է այդ հողակտորի կադաստրային արժեքի 100%-ից ոչ պակաս:
   2) Մեկ աճուրդային քայլ սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 20 297 (քսան հազար երկու հարյուր իննսունյոթ) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, հունիսի 27
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«1» հունիսի 2018 թվականի N 22

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 72-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի դեպի Մուսալեռան հերոսամարտի հուշահամալիր տանող Ֆր. Վերֆել փողոցի և Լուի Դարթիժ դյու Ֆուրնեի փողոցի գետնանցման մաքրման աշխատանքների համար տրամադրել 43 000 /քառասուներեք հազար/ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, հունիսի 1
գ. Մուսալեռ